ОБЪЯВЛЕНИЕ

об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных от 30-го августа 2024 года в договор N «DD-GHAShDzB-24/05-3» (далее - Договор), заключенный от 21-го мая 2024 года в результате процедуры закупки под кодом «DD-GHAShDzB-24/05», организованной с целью приобретения текущих ремонтных работ зданий, строений для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенные изменения.

Причина возникновения изменения:

Договор заключен на основе части 6 статьи 15 закона РА «О закупках», для предусмотренных Договором работ выделены финансовые средства.

Описание изменения:

- Приложение N 4 под заглавием «ГРАФИК ОПЛАТЫ» к Договору утверждено в новой редакции.
- Сроком выполнения работ установлено 40 календарных дней, со дня, следующего за днем вступления в силу соглашения.

Обоснование изменения:

Пункты 8.5 и 8.13 Договора

Заказчик – Судебный департамент

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.05.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/05-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«30» օգոստոսի 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՄՊԵՔՍ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Ղազազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 21.05.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/05-3» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սևանի նստավայրի՝ ք. Սևան, Աբովյան 6/1 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք) անհրաժեշտությունը, ինչպես նաև Կապալառուի կողմից ներկայացված կատարվելիք աշխատանքների նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ) և Պայմանագրով սահմանված 80000000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից՝ համաձայն հաստատված Նախահաշվի՝ 7725940 (յոթ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը.

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 4-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2. Աշխատանքների կատարման ժամկետ սահմանել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 40 օրացույցային օր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 30.07.2024թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դարական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԻՄՊԵՔՍ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Օգոստոսի 23 փողոց N 52
ՀՎՀՀ՝ 08423871
Հ/Հ՝ 2623265912741001
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Ղազարյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
«30» օգոստոսի 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 4
« 21 » մայիսի 2024թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/05-3» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
4	45461100/525	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/								7725940	7725940	7725940	7725940	7725940	7725940

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԻՄ ՊԵՔՍ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Օգոստոսի 23 փողոց N 52
ՀՎՀՀ՝ 08423871
Հ/Հ՝ 2623265912741001
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Հ. Ղազազյան

(ստորագրություն)
Կ.Տ